ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԸ

1988 թվականի նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի հերթական պլենումը, որը քննարկեց մարզային կուսակցական կազմակերպության կյանքի ընթացիկ հարցեր: Քննարկվեցին կազմակերպական հարցեր:

Պլենումը կուսակցության մարզկոմի բյուրոյի անդամ ընտրեց ընկ. Ս. Հ. Բաբայանին: Թոշակի անցնելու կապակցությամբ ընկ. Ե. Գ. Սարգսյանը ազատվել է կուսակցության մարզկոմի բյուրոյի անդամի պարտականություններից: Թոշակի անցնելու կապակցությամբ կուսակցության մարզկոմի բյուրոյի անդամության թեկնածուի պարտականություններից ազատվել է ընկ. Վ. Բ. Հարությունյանը:

Մարզի սահմաններից դուրս գալու կապակցությամբ կուսակցության մարզկոմի բյուրոյի անդամության թեկնածուի պարտականություններից ազատվել է ընկ. Ն. Ա. Հաջիևը:

Պլենումը ընկ. Մ. Ե. Հովհաննիսյանին հանձնարարեց «Սովետսկայա Ղարաբաղ»-«Սովետսկի Կարաբախ» թերթի խմբագիր: